«ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Այլընտրանքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2003 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-6-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 17-րդ հոդվածի 3-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենքը լրացնել նոր 17.1 հոդվածով հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 17.1. Այլընտրանքային աշխատանքային ծառայողին ծառայության այլ վայր փոխադրելը

1. 1. Այլընտրանքային աշխատանքային ծառայողը ծառայության այլ վայր կարող է փոխադրվել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի ղեկավարի հրամանով՝ հաշվի առնելով հանրապետական հանձնաժողովի ներկայացրած եզրակացությունը, որը տրվում է ծառայության վայրի կազմակերպության ղեկավարի կամ ծառայության իրականացումը կազմակերպող և վերահսկող լիազոր մարմնի ղեկավարի գրավոր առաջարկության հիման վրա:
2. Սույն հոդվածի 1-րդ մասում նախատեսված առաջարկությունը կամ դիմումը հանրապետական հանձնաժողով կարող է ներկայացվել ելնելով՝

- այլընտրանքային աշխատանքային ծառայողի ընտանեկան պայմաններից.
- կազմակերպչական-հաստիքային անհրաժեշտությունից.
- այլընտրանքային աշխատանքային ծառայողի առողջական վիճակից:

3. Այլընտրանքային աշխատանքային ծառայողին ծառայության այլ վայր փոխադրելու կարգի նկատմամբ կիրառվում են սույն օրենքի 8.1. և 17-րդ հոդվածներով սահմանված կանոնները՝ այնքանով, որքանով դրանք իրենց էությամբ (mutatis mutandis) կիրառելի են փոխադրելու կարգի նկատմամբ:»:

Հոդված 3. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:
2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկ ամսյա ժամկետում Կառավարությունը Օրենքի 17.1 հոդվածի 1-ին մասին համապատասխան սահմանում է լիազորված պետական կառավարման մարմին:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1.Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

«Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 17-րդ հոդվածի 3-րդ մասը, սահմանելով ծառայության ընթացքում այլընտրանքային աշխատանքային ծառայողի այլ կազմակերպություն կամ այլ վայր ծառայության փոխադրվելու հնարավորություն, միաժամանակ չի սահմանում այն հիմքերը, որոնց դեպքում համապատասխան իրավասու պետական կառավարման մարմնի ղեկավարը կարող է որոշում կայացնել այլընտրանքային աշխատանքային ծառայություն անցնող քաղաքացուն ծառայության այլ վայր փոխադրելու մասին:

Այս առումով հարկ է ընդգծել, որ ի տարբերություն օրենքում առկա թերի իրավակարգավորմանը՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 5-րդ մասով հստակորեն սահմանված են այն հիմքերը, որոնց առկայության դեպքում շարքային և սպայական կազմերի պարտադիր զինծառայողները կարող են սահմանված կարգով ծառայության այլ վայր տեղափոխվել, ինչը հնարավորություն է տալիս իրավակիրառողին նշված հիմքերի առկայության դեպքում կայացնել համապատասխան որոշում:

Ասվածի համատեքստում պետք է նշել, որ «...*օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ,* ***որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը***» (ՍԴՈ-630):

Հաշվի առնելով վերոնշյալը՝ նախագծով առաջարկվում է այլընտրանքային աշխատանքային ծառայողին այլ կազմակերպություն կամ այլ վայր ծառայության փոխադրելու երկու հիմք, այն է՝

1. այլընտրանքային աշխատանքային ծառայողի ընտանեկան պայմաններից ելնելով.
2. կազմակերպչական-հաստիքային անհրաժեշտությունից ելնելով:

Օրենքում նշված հիմքերի նախատեսումը կանխատեսելի կդարձնի ծառայության ընթացքում այլընտրանքային աշխատանքային ծառայողի այլ կազմակերպություն կամ այլ վայր ծառայության փոխադրվելու հետ կապված իրավահարաբերությունները և հնարավորություն կտա իրավասու պետական կառավարման մարմնի ղեկավարին՝ այլընտրանքային աշխատանքային ծառայության վայրի կազմակերպության ղեկավարի, կամ ծառայության իրականացումը կազմակերպող և վերահսկող լիազոր մարմնի ղեկավարի առաջարկության հիման վրա կայացնել համապատասխան որոշում:

Այնուամենայնիվ, Օրենքի 17-րդ հոդվածում 3-րդ մասում առկա իրավակարգավորումների թերի լինելը միայն նշվածով չի սահմանափակվում: Խնդիրն այն է, որ նշված հոդվածի 3-րդ մասում չի սահմանվում նաև, թե որոնք են այն իրավասու մարմինները, որոնց առաջարկության հիման վրա իրավասու պետական կառավարման մարմնի ղեկավարը կարող է կայացնել համապատասխան որոշում: Նշված խնդրի լուծման նպատակով Նախագծում առաջարկվում է՝ իրավասու պետական կառավարման մարմնի ղեկավարին, համապատասխան առաջարկություն ներկայացնելու իրավունք տրամադրել այլընտրանքային աշխատանքային ծառայության վայրի կազմակերպության ղեկավարին, ինչպես նաև ՀՀ կառավարության 25.07.2013թ.-ի N796-Ն որոշմամբ սահմանված՝ ծառայության իրականացումը կազմակերպող և վերահսկող լիազոր մարմնի ղեկավարին:

2.Առաջարկվող կարգավորման բնույթը

Նախագծով նախատեսվում է փոփխություններ և լրացումներ կատարել «այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքում, մասնավորապես՝

1. առաջարկվում է այլընտրանքային աշխատանքային ծառայողի այլ կազմակերպություն կամ այլ վայր ծառայության փոխադրվելու հնարավորություն՝ այլընտրանքային աշխատանքային ծառայողի ընտանեկան պայմաններից ելնելով, ինչպես նաև կազմակերպչական-հաստիքային անհրաժեշտությունից ելնելով,
2. իրավասու պետական կառավարման մարմնի ղեկավարին այլընտրանքային աշխատանքային ծառայողի այլ կազմակերպություն կամ այլ վայր ծառայության փոխադրելու առաջարկություն ներկայացնելու իրավունք տրամադրել այլընտրանքային աշխատանքային ծառայության վայրի կազմակերպության ղեկավարին, ինչպես նաև ՀՀ կառավարության 25.07.2013թ.-ի N796-Ն որոշմամբ սահմանված՝ ծառայության իրականացումը կազմակերպող և վերահսկող լիազոր մարմնի ղեկավարին:

3. **Ակնկալվող արդյունքը**

Նախագծի ընդունմամբ հստակորեն կսահմանվեն այլընտրանքային աշխատանքային ծառայողի այլ կազմակերպություն կամ այլ վայր ծառայության փոխադրելու հիմքերը, ինչպես նաև իրավասու այն մարմինները, որոնց առաջարկության հիման վրա իրավասու պետական կառավարման մարմնի ղեկավարը կկայացնի համապատասխան որոշում: